

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
2011թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2011 թվականի ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

1. Մտից թղթակցություն՝

- ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ (72 միավոր),
- բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից (2162 միավոր),
- գ/ ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներից (938 միավոր),
- դ/ ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներից (829 միավոր),
- ե/ արտասահմանյան երկրներից (736 միավոր), այդ թվում՝
ԱՊՀ երկրներից (61 միավոր) :

Ընդամենը՝ 4737 միավոր (2010 թ.-ի 4088 միավորի դիմաց):

2. Ելից թղթակցություն՝

- ա/ ելից գրություններ (2177 միավոր)
- բ/ հրապարակումներ (10026 միավոր)

Ընդամենը՝ 12203 միավոր (2010թ.-ի 12393 միավորի դիմաց):

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2011 թվականի ընթացքում կազմել է 18130 միավոր (2010թ.՝ 16481 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2011 թվականին 2010 թվականի համեմատությամբ ավելացել է 649 միավորով, իսկ ելից թղթակցությունը՝ 1000 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2011 թվականի ընթացքում վերահսկողություն է սահմանվել 172 (2010թ՝ 176 միավոր) փաստաթղթի և հանձնարարականի (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, նախարարություններից գրություններ և այլն) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: